



Խտալիոյ թագաւորական ընտանիքը

ԴԱՒԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՏԱԼԻՈՑ ՎԵՋԱՓԱՌՆԵՐՈՒՆ

ԴԷՄ ՀՈՌՄԱՅ ՄԷՋ

ՎԵՋԱՓԱՌՆԵՐԸ ՎՏԱՆԳԻ ԶԵՐԾ



Երկար ատենէ ի վեր կը կարծուէր թէ իտալացիք ալ մոռցան իրենց արքայապալան մահափորձերը: Ո՛չ ապաքէն տասնեակ տարիներ անցան ողբացեալ Ումբերտոյ թագաւորին և Աւստրիոյ Եղիսաբեթ կայսրուհւոյն սպաննութիւններէն վերջ: Բայց կ'երևի թէ վերստին իտալացիի մը մէջ հին բնազդը արթնցեր է, այս ճիւղին մէջ ալ իրենց առաջնութիւնը և աւանդութիւնը չկորսնցնելու: Եւ որո՞նք դժմ կ'ուզէր իր հարուածները, իր իսկ թագաւորին, Վիկտոր Էմանուէլ Գ.ի:

Ահաւասիկ դէպքը: Մարտ 14ի առաւօտը, մինչդեռ թագաւորն ու թագուհին իրենց հետևորդով Փանթէոն կ'երթային ներկայ հանուելու Ումբերտոյ թագաւորին հոգեհանգստեան պատարագին, անձ մը վեցհարուածեանի երեք հարուած պարպեց թագաւորական կառքին վրայ: Թագաւորը և թագուհին վտանգէ զերծ մնացին:

Գաւազրութեան հեղինակն է հոռմայեցի որմնագիր մը, Անթոնիոյ Գ' Ալպա անուն, քսանութիւն տարուան, Գ' Ալբա իսկոյն կը ձերբակալուի:

Ինչո՞ւ, ինչո՞ւ կը զինուի ռամկի մը ձեռքը Վիկտոր Էմանուէլ Գ.ի դէմ որ այնքան ազատ թողուցեր է հասարակաց կարծիքն ու կուսակցութիւնները գրեթէ իր իսկ անձին շուրջը, ինչո՞ւ կը զինուի թագուհիի մը դէմ որ օրինակ է ազնուութեան ու բարեպաշտութեան:

Առանց պատասխանի մնացած այս ինչո՞ւներն են որ մեծ զայրոյթ յառաջ բերաւ ժողովրդեան մէջ դժպիտ այս տեսակ արիւնախանձ անմտութիւնները, և ցցուց

թէ ինչ ջերմ զգացումներ ունի բովանդակ իտալիա իր վեհափառներուն վրայ, Հարկ եղաւ որ ոստիկանութիւնը գրեթէ հրաշքով ազատէ ոճրագործը ժողովրդեան ձեռքէն որպէս զի զայն չպատուէ: Ժողովրդեան անբաւ բազմութիւն երկար ատեն թագաւորական պալատին առջեւ ուրախութեան ցոյցեր ըրաւ. և բովանդակ տէրութեան մէջ դրօշակներ պարզուեցան և եկեղեցիներու մէջ գոհարանական աղօթքներ երգուեցան, յաջողութեամբ վրտանգէն ազատելուն համար:

Սոյն ոճրագործ գաւազրութիւնը Վիկտոր Էմանուէլ Գ.ի անձին դէմ մեծ ցաւ պատճառեց Վ. Ե. Ն. տիկի Միխայիլանց Միարանութեան, ինչպէս մեծ ուրախութիւն անկէ յաջողութեամբ ազատելուն համար: Երբին վեհափառութիւն Վիկտոր Էմանուէլ Գ. դեռ երկու տարի յառաջ իր անակնկալ այցելութեամբը Ս. Ղազար, մեծ համակրութիւն կը ցուցնէր Հայերու վրայ, ոչ միայն զմեզ մեր անցեալին մէջ լաւ ճանչնալով, ըլլալով հայկական հնութեանց քաջ զրամագէտ — զրամահաւաքներէն մէկը, այլ նաև այցելած ըլլալուն համար Այրարատն ու Էջմիածին, զորս շատ հաճութեամբ կը յիշէր իր խօսակցութեանց մէջ: Միարանութիւնը՝ դաւադրութեան օրն իսկ, 14 մարտ, իտալական դրօշը կը պարզէր իր ուրախակցութեան նշան մը յաջողութեամբ այս աղետէն ազատելուն: Եւ անյապաղ հետեւեալ երկու հեռագիրները կը զրկէր Հոռմ, մին ուղղուած վեհափառութեանց, միւսը Մայր թագուհւոյն:



Մարգարիտա մայր թագուհի Խոսկիոյ

14. 3. ՎԵՆԵՏԻԱ

Նորին Պայծառափայլութեան Համարդ Նորին Վեճափառութեան թագաւորին

Վենետիկի Սուրբ Ղազարու հայ Միաբանութիւնը կը խնդրէ Ձերդ Պայծառափայլութենէն յայտնել Վեճափառութեանց՝ թագաւորին և շնորհազարդ թագուհւոյն, սաստիկ ցաւակցութիւնները եպիրեի դաւադրութեան համար և շնորհակալ կ'ըլլայ Բարձրելոյն ամբողջ պահելուն համար իրենց թանկագին կեանքերը:

Արքեպիսկոպոս Եփրեղեան

14. 3. ՎԵՆԵՏԻԱ

Նորին Պայծառափայլութեան չթաղիւր Տիկնոջ Նորին Վեճափառութեան Մայր թագուհւոյն

Վենետիկի Սուրբ Ղազարու հայ Միաբանութիւնը կսկծալի ափշութեամբ լսելով զարդ դաւադրութիւնը Վեճափառներու թանկագին կեանքերուն դէմ, թագաւորին ու թագուհւոյն, կը խնդրէ Ձերդ Պայծառափայլութենէն յայտնել Նորին Վեճափառութեան Մայր թագուհւոյն սաստկագոյն ցաւակցութիւններ, մինչդեռ շնորհակալութեան աղօթքներ կը վերառաքենք Վատանգէն ազատելուն համար:

Արքեպիսկոպոս Եփրեղեան



Գեր. Իգմատիոս Վ. Կիւրեղեան Սրբ. և ըմբռն. ամբայ Վեմետիկի Մխիթարեանց.

Յաջորդաբար կը հասնէին այս երկու հեռագիրներուն ալ պատասխանները որոնք ոչ նուազ ջերմ զգացում կը բովանդակեն Վեմետիկի հայ Միաբանութեան համար

ROMA 15. 3.

Eccellenza Arcivescovo

Sua Maestà la Regina Madre ha accettato con grato animo i sentimenti di affettuosa devozione confermatile da codesta congregazione in occasione del nefando attentato di ieri del pensiero reverente porge a S. E. riconoscenti grazie.

*La dama d'onore
Marchesa di Villamarina*

ՀԱՌԻ 15. 3.

Պայծառափայլ Արքեպիսկոպոս

Նորին Վեհափառութիւն Մայր Թագուհին ընդունեցաւ հաշտ ոգով սիրալիր անձնութեան զգացումները զորս այդ Միաբանութիւնը կը հաւատէ իրեն՝ առթիւ երեկուան եպերելի դաւադրութեան և յարգալիր մտք կը մատուցանէ Նորին Պայծառափայլութեան երախտագէտ շնորհակալութիւններ:

Շրադիր տիկին
Մարքէզա դի Վիլլամարինա

ROMA 16. 3.

ՀՈՒՄ 16. 3.

Arcivescovo Ghiurekian

I sentimenti espressi da S. E. Rovma, in nome della congregazione armena sono giunti molto grati augusti sovrani che ringraziano sentitamente.

Ministro Mattioli

Արքեպիսկոպոս Կիւրեղեան

Զգացումները արտայայտուած Նորին Մեծարգոյ Պաշտօնապալուծենէն յանուն հայ միաբանութեան շատ հաճոյ անցան օգոստոսիառ իշխողներուն որ ջերմագին շնորհակալ կ'ըլլան:

Հապարտակոտ արքունի տան՝ Մատիոլի

Երկրորդ օրը, 17 մարտ կիրակէ, վենետիկի Սուրբ Ղազարու հայ Միաբանութիւնը, մասնակցութեամբ Մուրատ-Ռափայլեանի աշակերտաց ու վարդապետներուն, Զրեղ Աստուած գոհարանական աղօթքը հնչեցուց եկեղեցւոյ մէջ, ինդրեկով Նորին վեհափառութեան վիկորը Լմանուէլ Գ. Թագաւորին համար երկայն ու անամպ կեանք՝ իբր գրաւական երկրին մեծագոյն զարգացման և հայ գաղութին երջանկութեան:

ԻՄԲ. ԲԱԶՄ.

ԲԱՐՈՑԱԿԱՆՆԻ ԵՒ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆՆԵՐ

ՈՒՍՈՒՄԸ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ՄԵՋ:

◁◻◻

ԲԱՐՈՑԱԿԱՆԻ ուսումը անգլիական (grammar schools) և (public schools) դպրոցներուն մէջ կը գրէ prof. Emile Cann, առաջնորդ ունենալով բրիտանական ընկերային և անհատական կեանքի ամէն գործի մէջ յայտնուած այն օգտաւիրողի մտածութիւնը, բարձրը ձգկտիր, չներշնչուի Գանթի և Յեղափոխութեան սկզբունքներով, այն բոլոր վեհանձն ու խոր բաներով զոր արդի ոգին մեզի տուած է. այլ, ի փոխարէն, շատ յարմար երիտասարդներու կարողութիւններուն, պիտոյից և մտքին, որոնց նուիրուած է:

Բարոյակներ, Անգլիացիին շատ լաւ կը զգայ իր ազատութիւնը և անհատականութիւնը. ասոնք են անա զգացումները զորս պէտք է կրթել իր մէջ որպէս զի իր իրաւունքները պահանջելու և իր ազատութիւնը գործածելու ժամանակ գիտնայ ուրիշին չփասել: Այս նպատակին համար վերանցական տեսութիւնները անօգուտ են, քիչ մը ողջմտութիւն գործնականին մէջ բաւական է անհատին փափաքները ամենուն շահերուն հետ հաշտեցնելու համար: Ազատութիւնը, անձնականութիւնը — կ'ը-

սեն երիտասարդներուն, — անբռնաբարելի իրաւունքներ են, ամէն ոք ձեզի նման պէտք է վայելէ զանոնք, անհրաժեշտ է ուրեմն յարգել ուրիշին մէջ այն բանը զոր կ'ուզէ մարդ որ իրեն մէջ յարգուի:

Պարտքը գերագոյն օրէնք մը չէ, բացարձակ հրամայական. գործնական դատողութենէ թելադրուած խորհուրդ է, հարկաւոր և օգտակար հրահանգ մը:

Honesty is the best policy. Հոս մատառիսը յաւագոյն քաղաքականութիւն է, անա օգտին և համեստին երկու գաղափարները կը միանան: Խեղճ պատճառարանութիւն մը եթէ կ'ուզենք, բայց առաջ բերած բարիքին համար ոչ արհամարհելի:

Անգլիական դպրոցներէն շատերուն մէջ բարոյականի վարդապետութեան մասնաւոր ուսում չկայ, այլ առօրեայ կեանքին մէջ պատահած դէպքերէ նոյն երիտասարդաց փորձով, համոզելի դաս մը կը հանուի: Ազնուական կամ հարուստի մը տղան հակաճառութեան կը բռնուի, հասարակ բառ մը կ'ըսէ, իրմէ աւելի համեստ դասակարգէ տղու մը, որուն հարուածին, պատասխաններուն և կոուփին վրայ Head — master մեծապէս բոլոր աշակերտները կը հաւաքէ, և պարզ ծանրութեամբ մը, վստահ իր ունկնդիրներուն լաւ դատողու-